

Գերման փիլիսոփայ **Իմմանուել Կանտ** (Immanuel Kant, 1724 – 1804 թ.) փիլիսոփայությունը կը բնորոշէ գլխավոր չորս հարցադրումներով, որոնք կը կազմեն փիլիսոփայական չորս տարբեր ոլորտները.-

1. Ի՞նչ կրնամ գիտնալ (**բնագանցական ոլորտ** – Metaphysics),
2. Ի՞նչ պետք է ընեմ (**բարոյագիտական ոլորտ** – Ethics),
3. Ի՞նչ կրնամ յուսալ (**կրօնական ոլորտ** – Religion) եւ
4. Ի՞նչ է մարդը (**մարդաբանական ոլորտ** – Anthropology):

Իրականութեան մէջ, վերջաւորութեան յիշուած մարդաբանական ոլորտը, ինքնին, կը պարփակէ միւս երեք ոլորտներն ալ, որովհետեւ վերջին հաշուով, ինդրոյ առարկան, նոյնինքն մարդ էակն է, իր զանազան հետաքրքրութիւններով, զարմանքով ու տարակուսանքով:

Փիլիսոփայությունը, որպէս գիտութիւն, ունի իր իւրայատուկ տեսական ու գործնական ճիւղերը, որոնք են.-

- **Մարդաբանութիւն** (Anthropology), որ կը քննարկէ մարդու բնութիւնն ու էութիւնը, ինչպէս նաեւ անոր դիրքը՝ աշխարհի վրայ եւ ապրելակերպը՝ պատուարժան ընկերութեան մը մէջ:
- **Բարոյագիտութիւն** (Ethics), որ կը քննարկէ մարդու վարմունքը եւ մարդու դիրքը՝ *Բարիին* հանդէպ, նպատակ ունենալով կարգաւորել մարդու կեանքը՝ ընկերութեան մէջ:
- **Գեղագիտութիւն** (Aesthetics), որ կը քննարկէ *Գեղեցիկին* միջ-ենթակայական չափանիշերը, ինչպէս նաեւ անոր պայմանները եւ երեւոյթները՝ բնութեան եւ արուեստի մէջ եւ անոր ազդեցութիւնը՝ մարդոց վրայ:
- **Տրամաբանութիւն** (Logics), որ ճիշդ սկզբունքներու, վճռական մտածումի ու փաստարկումի ուսմունքն է, մանաւանդ *Ձեւական տրամաբանութիւնը* (Formal Logics) իր տարրական եւ Մեթոդական մասերով:
- **Բնագանցութիւն** (Metaphysics), որ կը քննարկէ «է»ն կամ «գոյ»ը: Իր մասերն են.- *Էաբանութիւնը* (Ontology), *բանական աստուածաբանութիւնը* (Rational Theology), *բանական հոգեբանութիւնը* (Rational Psychology) եւ *բանական Տիեզերաբանութիւնը* (Rational Cosmology):
- **Իմացաբանութիւն** (Epistemology), որ գիտական միջոցներով կը քննարկէ մարդու ճանաչողութեան (բան մը գիտնալու ու ճանչնալու) պայմաններն ու կարելիութիւնները, ինչպէս նաեւ՝ ճանաչողութեան ընթացքն ու ընթացքի արդիւնքը, որպէս գիտութիւն:
- **Գիտութեան Փիլիսոփայութիւն** (Philosophy of Science), որ կը քննարկէ գիտական առանձին ճիւղերու պայմանները եւ կարելիութիւնները եւ կը կոչուի նոյն այդ ճիւղին անունով, ինչպէս.- *կենսաբանութեան փիլիսոփայութիւն* (Philosophy of Biology), *բնագիտութեան փիլիսոփայութիւն* (Philosophy of Physics), *ուսողութեան կամ մաթեմատիկայի փիլիսոփայութիւն* (Philosophy of Mathematics), եւայլն ...: